

**«Կամուրջ»
ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ**

Ֆինանսական հաշվետվություններ

**2017թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար**

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն.....	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն.....	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն.....	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն.....	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն.....	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ.....	10



«Քեյ-Փի-Էն-Ջի Արմենիա» ՓԲԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010,
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 566 762
Ֆաքս + 374 (10) 566 762
Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Կամուրջ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի խորհրդին

Կարծիք

Մենք իրականացրել ենք «Կամուրջ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի (Կազմակերպություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման բաղաբաղկանության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Կազմակերպության ֆինանսական վիճակը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունքները և դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Կարծիքի արտահայտման հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Նշված ստանդարտներով նախատեսված մեր պարտականությունները ներկայացված են մեր եզրակացության «*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի օրենսգրքի (ՀԷՄՍԽ օրենսգրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և մենք կատարել ենք էթիկային վերաբերող մեր պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ օրենսգրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

Այլ նշում

Կազմակերպության 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 2017թ. մարտի 15-ի եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողության գնահատման համար, բացահայտելով, կիրառելի լինելու դեպքում, անընդհատությանը վերաբերող հարցերը և կիրառելով անընդհատության հիմունքով հաշվառումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարել Կազմակերպությունը կամ դադարեցնել վերջինիս գործունեությունը, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են վերահսկել Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացը:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիք առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են սխալի կամ խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ երաշխիքը հավաստիացման բարձր աստիճան է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ների համաձայն աուդիտի իրականացման ընթացքում միշտ հնարավոր կլինի հայտնաբերել էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե կարելի է պատճառաբանված կերպով ակնկալել, որ, առանձին կամ միասին վերցված, ազդեցություն կունենան այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական թերահավատություն աուդիտի ընթացքում: Սենք նաև՝

- հայտնաբերում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին անդրադարձող աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել գաղտնի համաձայնություն, կեղծիք, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ՝ տվյալ հանգամանքներում տեղին աուդիտորական ընացակարգեր մշակելու, բայց ոչ Կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:



- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և հարակից բացահայտումների հիմնավորվածությունը:
- կատարում ենք եզրահանգում ղեկավարության կողմից անընդհատության հիմունքով հաշվառում կիրառելու տեղին լինելու վերաբերյալ և, հիմք ընդունելով ձեռք բերված աուդիտորական ապացույցները, կատարում ենք հետևություն, թե արդյոք առկա է ղեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է լուրջ կասկածներ հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդ բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են միջև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա ղեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Կազմակերպության կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձությունները այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, աուդիտի ընթացքում առաջացած նշանակալից հարցերի, այդ թվում՝ աուդիտի ընթացքում հայտնաբերված ներքին վերահսկողության համակարգի էական թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման համար հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Տրդրան Գասպարյան
 Ղեկավար գործընկեր, «Զեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի տնօրեն

KPMG Armenia




«Զեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
 25 մայիսի 2018թ.



«Կամսոյ» ընդհանրապետական կազմակերպություն ՓԲԸ
 Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծնթգ.	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտ	4	2,594,563	2,738,514
Տոկոսային ծախս	4	(530,330)	(680,686)
Զուտ տոկոսային եկամուտ		2,064,233	2,057,828
Զուտ օգուտ/(վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից		8,214	(3,278)
Զուտ (վնաս)/եկամուտ փոխարժեքային տարբերություններից		(670)	10,194
Այլ գործառնական եկամուտ	5	259,818	360,376
Այլ գործառնական ծախսեր		(25,618)	(22,431)
Գործառնական եկամուտ		2,305,977	2,402,689
Արժեզրկումից կորուստներ	6	(438,535)	(953,368)
Աշխատակազմի գծով ծախսեր		(959,248)	(859,296)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	7	(434,492)	(490,928)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		473,702	99,097
Շահութահարկի գծով ծախս	8	(111,653)	(41,034)
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար		362,049	58,063

6-ից 49-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2018թ. մայիսի 25-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

 Ալեքսանդր Տերյան Գործադիր տնօրեն		 Ալեքսանդր Սահակյան Գլխավոր հաշվապահ
--	---	---

«Աամուրջ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ
 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթգ.	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9	936,775	1,727,059
Ֆինանսական կազմակերպությունների պարտավորություններ	10	651,490	358,465
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ		-	43,239
Հաճախորդներին տրված վարկեր	11	12,553,629	11,745,169
Ընթացիկ հարկային ակտիվներ		-	40,481
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	12	154,214	168,931
Հետաձգված հարկային ակտիվներ	8	18,861	59,425
Այլ ակտիվներ		19,494	24,788
Ընդամենը ակտիվներ		14,334,463	14,167,557
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Վարկեր և փոխառություններ	13	7,892,847	8,159,706
Ընթացիկ հարկային պարտավորություններ		30,609	-
Այլ պարտավորություններ		142,405	101,298
Ընդամենը պարտավորություններ		8,065,861	8,261,004
ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ		5,000,000	5,000,000
Լրացուցիչ կապիտալ		193,044	193,044
Զբաղիչված շահույթ		1,075,558	713,509
Ընդամենը սեփական կապիտալ		6,268,602	5,906,553
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		14,334,463	14,167,557

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Աամուրջ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ
 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
ԳՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Ստացված տոկոսներ	2,654,121	2,730,757
Վճարված տոկոսներ	(576,933)	(698,686)
Ջուտ մուտքեր արտարժույթով գործառնությունների գծով	8,215	5,141
Ջուտ այլ ստացված եկամուտ	234,201	331,288
Աշխատակազմի և այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ	(1,310,910)	(1,246,739)
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում		
Ֆինանսական կազմակերպությունների պարտավորություններ	(298,664)	1,632,510
Հաճախորդներին տրված վարկեր	(1,318,273)	(746,433)
Այլ ակտիվներ	7,007	(20,648)
Գործառնական պարտավորությունների աճ		
Այլ պարտավորություններ	41,590	11,113
Գործառնական գործունեության համար (օգտագործված)/ գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ՝ նախքան շահութահարկի վճարումը	(559,646)	1,998,303
Վճարված շահութահարկ	-	(51,960)
Գործառնական գործունեության համար (օգտագործված)/ գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր	(559,646)	1,946,343
ԳՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վաճառք և մարում	50,426	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(68,212)	(40,268)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք	99	-
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական միջոցների հոսքեր	(17,687)	(40,268)
ԳՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Ստացված վարկեր և փոխառություններ	4,196,525	2,514,111
Վարկերի և փոխառությունների մարում	(4,417,603)	(3,900,273)
Վճարված շահաբաժիններ	-	(38,000)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված դրամական միջոցների հոսքեր	(221,078)	(1,424,162)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	(798,411)	481,913
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	8,127	8,810
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	1,727,059	1,236,336
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	9 936,775	1,727,059

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Աամուրջ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ
 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ	5,000,000	193,044	693,446	5,886,490
Ընդամենը համապարփակ եկամուտ				
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	-	58,063	58,063
Գործառնություններ սեփականատերերի հետ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում				
Վճարված շահաբաժիններ	-	-	(38,000)	(38,000)
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	-	-	(38,000)	(38,000)
Մնացորդը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,000,000	193,044	713,509	5,906,553
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	5,000,000	193,044	713,509	5,906,553
Ընդամենը համապարփակ եկամուտ				
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	-	362,049	362,049
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,000,000	193,044	1,075,558	6,268,602

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1 Ներածություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Կամուրջ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն (Կազմակերպություն) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն 2010թ. մարտի 22-ին:

Կազմակերպության միանձնյա սեփականատերն է հանդիսանում Սիկրո ձեռներեցության զարգացման բարեգործական հիմնադրամը (Բաժնետեր): Բաժնետիրոջ գործունեությունը վերահսկվում է Հոգաբարձուների խորհրդի կողմից, որը բաղկացած է հինգ անդամից, որոնք, Բաժնետիրոջ կանոնադրության համաձայն, ընտրվում են նախապես սահմանված տարբեր ժամանակահատվածներով՝ Հոգաբարձուների խորհրդի այլ անդամների կողմից: Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 17-ում:

2013թ. հունվարի 30-ին Հոգաբարձուների խորհուրդը հաստատեց Կազմակերպության նոր կանոնադրությունը, համաձայն որի Կազմակերպության իրավական կարգավիճակը փոխվեց փակ բաժնետիրական ընկերության:

Կազմակերպությունը վարկային կազմակերպության լիցենզիա է ստացել ՀՀ կենտրոնական բանկից (ՀՀ ԿԲ) 2010թ. ապրիլի 27-ին: Կազմակերպության հիմնական գործունեությունը միկրո և միջին չափի վարկերի տրամադրումն է անհատներին և անհատ ձեռնարկատերերին սպառողական և բիզնես նպատակների համար Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ): Կազմակերպության գործունեությունը կարգավորվում է ՀՀ ԿԲ-ի կողմից:

Կազմակերպությունն ունի 15 մասնաճյուղ, որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում: Գլխամասային գրասենյակի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Սեբաստիա փ. 123: Կազմակերպության ակտիվների մեծամասնությունը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Կազմակերպության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

(բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների, որոնք ներկայացված են իրական արժեքով:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Կազմակերպության ֆունկցիոնալ արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը («դրամ»), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Կազմակերպության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար դեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ էական անորոշ գնահատումների և կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 11-ում՝ վարկերի արժեզրկման գնահատման հետ կապված:

(ե) Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Կազմակերպությունը կիրառել է ստորև ներկայացվող ստանդարտի փոփոխությունները՝ 1 հունվարի 2017թ. սկզբնական կիրառման ամսաթվով:

- *Բացահայտման պահանջների վերանայում (ՀՀՄՄ 7-ի փոփոխություններ)*. ՀՀՄՄ 7 «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն» ստանդարտը փոփոխվել է ՀՀՄՄԽ-ի ավելի լայնածավալ նախագծի շրջանակներում՝ ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվության ներկայացումը և բացահայտումը կատարելագործելու նպատակով: Փոփոխությունը պահանջում է այնպիսի բացահայտումներ, որոնք հնարավորություն կտան ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներին գնահատել ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխությունները, ներառյալ՝ դրամական միջոցների հոսքերով պայմանավորված և դրամական միջոցների հոսքերով չպայմանավորված փոփոխությունները: Բացահայտման այս նոր պահանջի բավարարման միջոցներից մեկը ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների ժամանակաշարքանի սկզբի և ժամանակաշարքանի վերջի դրությամբ մնացորդների համադրման ներկայացումն է: Այնուամենայնիվ, այս պահանջը կարելի է ապահովել նաև այլ եղանակներով:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև բերվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Արտարժույթ

(i) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ՀՀ դրամի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթով իրականացված գործառնություններից առաջացած օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբում ՀՀ դրամով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ՀՀ դրամով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերափոխարկվում են ՀՀ դրամի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ՀՀ դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Վերափոխարկման արդյունքում առաջացող արտարժութային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների վերափոխարկման արդյունքում առաջացող տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված արտարժութային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ թղթադրամները և մետաղադրամները և բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդներ: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում ենք ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Ֆինանսական գործիքներ

(i) Դասակարգում

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք՝

- հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով,
- կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ,
- հանդիսանում են ածանցյալ ֆինանսական գործիք (բացառությամբ ֆինանսական երաշխավորության պայմանագիր հանդիսացող ածանցյալ գործիքի կամ այն ածանցյալ գործիքի, որը նախատեսված է և հանդիսանում է արդյունավետ հեջավորման գործիք), կամ
- սկզբնական ճանաչման պահին Կազմակերպության կողմից նախատեսվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

Կազմակերպությունը ֆինանսական ակտիվները և պարտավորությունները նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ստորև ներկայացված պայմաններից մեկի բավարարման դեպքում:

- ակտիվները կամ պարտավորությունները կառավարվում, գնահատվում և ներկայացվում են իրական արժեքի հիմունքով,
- նախատեսումը վերացնում կամ էականորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունները, որոնք կառաջանային այլ հանգամանքներում, կամ
- ակտիվը կամ պարտավորությունը ներառում է պարունակվող ածանցյալ գործիք, որը էականորեն ձևափոխում է դրամական միջոցների հոսքերը, որոնք այլապես կպահանջվեին պայմանագրի համաձայն:

Չուտ ստացվելիք դիրքում գտնվող (դրական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև ձեռք բերված օպցիոնները, ներկայացվում են որպես ակտիվ: Չուտ վճարվելիք դիրքում գտնվող (բացասական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև տրամադրված օպցիոնները, ներկայացվում են որպես պարտավորություն:

Ֆինանսական գործիքների համապատասխան դասակարգումը ղեկավարությունը որոշում է սկզբնական ճանաչման պահին: Ածանցյալ ֆինանսական գործիքները և որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ նախատեսված գործիքները սկզբնական ճանաչման պահին չեն վերդասակարգվում շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից: Ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է վարկերի և դեբիտորական պարտքերի սահմանմանը, կարող է վերադասակարգվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների դասից, եթե Կազմակերպությունը մտադիր է և ի վիճակի է պահել այդ գործիքները մոտ ապագայում կամ մինչև մարման ժամկետը: Այլ ֆինանսական գործիքները կարող են վերադասակարգվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից միայն հազվադեպ հանգամանքներում: Հազվադեպ հանգամանքներն ի հայտ են գալիս եզակի արտասովոր դեպքի արդյունքում, երբ գրեթե անհավանական է, որ այն կրկին տեղի կունենա մոտ ապագայում:

Տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում, բացառությամբ այն գործիքների՝

- որոնք Կազմակերպությունը մտադիր է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել,
- որոնք Կազմակերպությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնք Կազմակերպությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնք գծով Կազմակերպությունի չի փոխհատուցի իր բոլոր սկզբնական ներդրումները՝ վճարունակության անկարողությունից տարբեր այլ պատճառներով:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն իրենցից ներկայացնում են այնպիսի ֆինանսական ակտիվներ, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չեն որպես վարկեր ու դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

(ii) Ծանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Կազմակերպությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները հաշվառվում են առք ու վաճառքի ամսաթվի դրությամբ:

(iii) Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի

հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ՝

- վարկերի ու դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և
- բաժնային գործիքներում ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն գնանշվող շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չէ արժանահավատորեն չափել և որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պահանջները:

(iv) Ամորտիզացված արժեք

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած սկզբնապես ճանաչված գումարի և մարման պահին գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան, որը հաշվարկվել է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստը: Հավելավճարները և գեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(v) Իրական արժեքի չափման սկզբունքներ

Իրական արժեքն այն գինն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կատարվելու ակտիվի վաճառքից կամ կվճարվելու պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ հիմնական շուկայում կամ, վերջինիս բացակայության դեպքում, ամենաբարենպաստ շուկայում, որին մուտքի հնարավորություն ունի Կազմակերպությունը նշված ամսաթվի դրությամբ: Պարտավորության իրական արժեքն արտացոլում է վերջինիս չկատարման ռիսկը:

Հնարավորության դեպքում, Կազմակերպությունը չափում է գործիքի իրական արժեքը՝ կիրառելով այդ գործիքի համար ակտիվ շուկայում գնանշվող գները: Շուկան համարվում է ակտիվ, եթե ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և բավարար ծավալով՝ շարունակական հիմունքով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:

Ակտիվ շուկայում գնանշվող գնի բացակայության դեպքում, Կազմակերպությունը կիրառում է գնահատման մեթոդներ՝ դիտարկելի տվյալների օգտագործումն առավելագույնի և ոչ դիտարկելի տվյալների օգտագործումը նվազագույնի հասցնելու նպատակով: Ընտրված գնահատման մեթոդը ներառում է բոլոր այն գործոնները, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեին մյուս հանգամանքներում:

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն ապացույցը սովորաբար գործարքի գինն է, այսինքն՝ տրված կամ ստացված հատուցման

իրական արժեքը: Եթե Կազմակերպությունը որոշում է, որ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և իրական արժեքը չի հիմնավորվում ակտիվ շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության համար գնանշվող գնով կամ հիմնված չէ գնահատման այնպիսի մեթոդի վրա, որն օգտագործում է միայն դիտարկելի տվյալները, ապա ֆինանսական գործիքի սկզբնական չափումն իրականացվում է իրական արժեքով՝ ճշգրտված սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերության հետաձգումով: Հետագայում, տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում համապատասխան հիմունքով՝ գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, սակայն ոչ ուշ այն պահից, երբ գնահատումն ամբողջովին հիմնավորվում է շուկայի դիտարկելի տվյալներով կամ գործարքն ավարտվում է:

Եթե իրական արժեքով չափվող ակտիվը կամ պարտավորությունն ունի պահանջարկի և առաջարկի գին, ապա Կազմակերպությունը չափում է ակտիվները և երկար դիրքերը պահանջարկի գնով, իսկ պարտավորությունները և կարճ դիրքերը՝ առաջարկի գնով:

Կազմակերպությունը ճանաչում է իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղի ունեցող փոխանցումներն այն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, որի ընթացքում կատարվել են այդ փոփոխությունները:

(vi) Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- շահույթում կամ վնասում ճանաչվում է այն ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը, որը դասակարգված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է սեփական կապիտալում՝ որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք (բացառությամբ արժեզրկումից կորուստների և վաճառքի համար մատչելի պարտքային ֆինանսական գործիքների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթի և վնասի), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի գծով տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև՝ ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

(vii) Ապաճանաչում

Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Կազմակերպությունը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապաճանաչման պայմանները բավարարող

փոխանցված ֆինանսական ակտիվի գծով տոկոսները, որոնք առաջացել կամ պահպանվել են Կազմակերպության կողմից, ճանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Կազմակերպությունը կատարում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Եթե ակտիվի սեփականության հետ կապված բոլոր կամ ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները պահպանվում են, ապա փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Գործարքներում, որոնցում Կազմակերպությունը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, այն ապաճանաչում է ակտիվը, եթե կորցնում է դրա նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցումների այն գործարքներում, որոնցում Կազմակերպությունը պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, Կազմակերպությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով նա ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Կազմակերպությունը դուրս է գրում անհավաքագրելի համարվող ակտիվները:

(viii) Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառում են սվոպերը, ֆորվարդները, ֆյուչերսները, սփոթ գործարքները, տոկոսադրույքների, արտարժույթների փոխարժեքների, քանկարժեք մետաղների, բորսաներում շրջանառվող օպցիոնները, ինչպես նաև այս գործիքների ցանկացած համակցությունը:

Ածանցյալ գործիքների սկզբնական ճանաչումն իրականացվում է ածանցյալ գործիքի պայմանագրի կնքման օրը գործող իրական արժեքով: Հետագայում ածանցյալ գործիքները վերաչափվում են իրական արժեքով: Բոլոր ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ՝ դրական իրական արժեքի դեպքում և որպես պարտավորություն՝ բացասական իրական արժեքի դեպքում:

Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Թեև Կազմակերպությունն ածանցյալ գործիքների առքն ու վաճառքն իրականացնում է ռիսկի հեջավորման նպատակով, այս գործիքները չեն համապատասխանում հեջի հաշվառման պահանջներին:

(ix) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվելով զուտ գումարով, միայն այն դեպքում, երբ Կազմակերպությունն ունի ճանաչված գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

(ե) Հիմնական միջոցներ

(i) Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

(ii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Վարձակալված միջոցների բարելավումների գծով մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության գործողության ժամկետից նվազագույնի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

- շենքեր	20 տարի
- համակարգիչներ և կապի սարքավորումներ	1-ից 5 տարի
- փոխադրամիջոցներ	5 տարի
- այլ	5 տարի

(զ) Ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման ծախսեր:

Ոչ նյութական ակտիվների գծով հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն դեպքում, երբ ավելացնում են այն ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են:

Համակարգչային ծրագրի մշակման կամ սպասարկման հետ կապված ծախսումները ճանաչվում են որպես ծախս կատարվելու ժամանակ:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 10 տարի:

(ե) Արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Կազմակերպությունը գնահատում է, թե արդյոք առկա է անկողմնակալ վկայություն ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկված լինելու մասին: Նման վկայության առկաության դեպքում, Կազմակերպությունը որոշում է արժեզրկումից կորստի գումարը:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբն արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստներ ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման մասին (կորստի դեպք), և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն է ունեցել ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը վարկառուի կողմից, վարկային պայմանագրի պայմանների խախտումները վարկառուի կողմից, ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի պայմանների այնպիսի վերանայումը, որը Կազմակերպությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի, վարկառուի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի համար գործող շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին վերաբերող այլ դիտարկելի տվյալները, ինչպիսիք են խմբի կազմի մեջ մտնող վարկառուների վճարունակության վատթարացումը, կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող վարկառուների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների փոփոխությունը:

Բացի այդ, վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթերում ներդրման իրական արժեքի՝ իր սկզբնական արժեքից նշանակալի կամ տևողական նվազումը նույնպես հանդիսանում է արժեզրկման անկողմնակալ վկայություն:

(i) Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են վարկերը և այլ դեբիտորական պարտքերը («վարկեր և դեբիտորական պարտքեր»): Կազմակերպությունը վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկումը կանոնավոր հիմունքով գնահատելու նպատակով:

Կազմակերպությունը նախ գնահատում է, թե արդյոք գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ վկայություն այն առանձին վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի են, և ապա առանձին կամ հավաքական հիմունքով՝ այն վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի չեն: Եթե Կազմակերպությունը որոշում է, որ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի գծով՝ լինի այն նշանակալի կամ ոչ նշանակալի, արժեզրկման անկողմնակալ վկայություն չկա, ապա այն ներառում է այդ վարկը կամ դեբիտորական պարտքը պարտքային ռիսկի համանման բնութագրերով վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և դրանք հավաքական հիմունքով գնահատում արժեզրկման տեսանկյունից: Այն վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին են գնահատվում արժեզրկման տեսանկյունից, և որոնց գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում կամ շարունակվում է ճանաչվել, չեն ներառվում արժեզրկման հավաքական հիմունքով գնահատման մեջ:

Եթե առկա է վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեգրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և այդ վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի, ներառյալ երաշխիքների գծով ստացվելիք գումարների և գրավի ներկա արժեքի միջև տարբերությունը: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և նախկին փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ներկա տնտեսական պայմաններն արտացոլող դիտարկելի տվյալների հիման վրա կատարվել են ճշգրտումներ, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում դիտարկելի տվյալները, որոնք պահանջվում են վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեգրկումից կորստի չափը գնահատելու համար, կարող են լինել սահմանափակ կամ այլևս ոչ ամբողջությամբ առնչվող տվյալ հանգամանքներին: Դա կարող է տեղի ունենալ, երբ վարկառու ֆինանսական դժվարությունների մեջ է, և համանման վարկառուների վերաբերյալ քիչ պատմական տվյալներ կան: Այդպիսի դեպքերում, ցանկացած արժեգրկումից կորստի չափը գնահատելու համար Կազմակերպությունն օգտագործում է իր փորձը և դատողությունները:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեգրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեգրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Այն դեպքերում, երբ վարկի հավաքագրումը հնարավոր չէ, վարկը դուրս է գրվում ի հաշիվ արժեգրկման գծով ձևավորված համապատասխան պահուստի: Կազմակերպությունը վարկի մնացորդը (և արժեգրկման գծով ձևավորված ցանկացած պահուստը) դուրս է գրում, երբ դեկավարությունը որոշում է, որ վարկը ենթակա չէ հավաքագրման և ձեռնարկվել են վարկի վերադարձի հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը:

(ii) *Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ*

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներում ընդգրկված չգնանշվող բաժնային գործիքները, որոնք չեն հաշվառվում իրական արժեքով, քանի որ այն հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել: Եթե առկա է այդ ներդրումների գծով արժեգրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես ներդրման հաշվեկշռային արժեքի և նմանատիպ ֆինանսական ակտիվների ներկա շուկայական հատույցադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությունը:

Այս ներդրումների գծով արժեգրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և ենթակա չեն հակադարձման:

(iii) *Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ*

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով արժեգրկումից կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակված վնասը փոխանցելով շահույթի կամ վնասի կազմ՝ որպես վերադասակարգման ճշգրտում: Կուտակված վնասը, որը այլ համապարփակ ֆինանսական արդյունքից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի կազմ, հանդիսանում է ձեռքբերման արժեքի՝ հանած մայր գումարի մարումները ու մաշվածությունը, և ընթացիկ իրական արժեքի՝

հանած նախկինում շահույթում կամ վնասում ճանաչված արժեզրկումից կորուստները, միջև տարբերությունը: Ժամանակի արժեքին վերագրելի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններն արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղադրիչ:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթի իրական արժեքն աճում է, և այդ աճը հնարավոր է անկողմնակալորեն կապել շահույթում կամ վնասում արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորուստը հակադարձվում է, իսկ հակադարձված գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, արժեզրկված վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնումը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

(iv) Ոչ ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից (հանած վաճառքի ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինե՝ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(ը) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Կազմակերպությունը որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

(թ) Վարկային պարտավորվածություններ

Բնականոն գործունեության ընթացքում Կազմակերպությունը հանձն է առնում վարկային պարտավորվածություններ, որոնք ներառում են չօգտագործված վարկային պարտավորվածությունները, ակրեդիտիվները և երաշխիքները, ինչպես նաև տրամադրում է վարկային ապահովագրման այլ տեսակներ:

Ֆինանսական երաշխավորություններն իրենցից ներկայացնում են պայմանագրեր, որոնք պարտավորեցնում են Կազմակերպությանը կատարել որոշակի վճարումներ, որոնք կփոխհատուցեն երաշխիքի սեփականատիրոջ այն վնասները, որոնք նա կկրեր, եթե առանձին պարտապանն ի վիճակի չլիներ կատարել վճարումները պարտքային գործիքի պայմաններով նախատեսված ժամկետներում:

Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորությունը սկզբնապես ճանաչվում է իրական արժեքով, հաշվի չառնելով գործարքի հետ կապված ծախսումները, և հետագայում չափվում է երկու մեծություններից առավելագույնով՝ սկզբնապես ճանաչված գումարը՝ հանած կուտակված ամորտիզացիան կամ երաշխավորության գծով կորուստների պահուստը: Ֆինանսական երաշխավորությունների գծով կորուստների պահուստը և վարկային այլ պարտավորվածությունները ճանաչվում են, երբ գոյություն ունի վնաս կրելու հավանականություն և այդ վնասը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորությունները և վարկային այլ պարտավորվածությունների գծով պահուստները ներառվում են այլ պարտավորությունների կազմում:

Վարկային պարտավորվածությունները չեն ճանաչվում, բացառությամբ հետևյալ պարտավորվածությունների.

- վարկավորման պարտավորվածություններ, որոնք Կազմակերպությունը նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ,
- եթե Կազմակերպությունն ունի իր վարկավորման պարտավորվածություններից առաջացող ակտիվների՝ դրանց առաջացումից կարճ ժամանակ անց վաճառելու նախկին պրակտիկա, ապա նույն դասում գտնվող բոլոր վարկավորման պարտավորվածությունները դիտվում են որպես ածանցյալ գործիքներ,
- վարկային պարտավորվածություններ, որոնք կարող են մարվել գուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիք մատակարարելով կամ թողարկելով,
- շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու պարտավորվածություններ:

(ժ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հողվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող եկամտի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ չեն ճանաչվում հետևյալ ժամանակավոր տարբերությունների համար՝ հարկային նպատակների համար չվազեցվող գույքի, ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչում ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքում, որն ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա, ժամանակավոր տարբերություններ, որոնք վերաբերում են այն դուստր կազմակերպություններում, ասոցիացված կազմակերպությունում և համատեղ ձեռնարկություններում կատարված ներդրումներին, որտեղ մայր կազմակերպությունը հնարավորություն ունի վերահսկել ժամանակավոր տարբերության հակադարձման ժամկետները և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի մոտ ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Կազմակերպությունը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկի գծով համապատասխան օգուտը կարող է իրացվել:

(h) Եկամտի և ծախսի ճանաչում

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահութում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վարկերի տրամադրման, սպասարկման և այլ վճարները, որոնք գործարքի հետ կապված ծախսերի հետ միասին դիտարկվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում են և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ վճարները, կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ վարձակալության գործողության ժամկետի ընթացքում:

(լ) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Կազմակերպությունը մտադիր է կիրառել այդ ստանդարտները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

(ա) ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»

2014թ. հուլիսին ՀՀՄՄԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի վերջնական տարբերակը: ՖՀՄՍ 9-ը գործում է 2018թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող է կիրառվել ժամանակից շուտ: Այն փոխարինում է ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում» ստանդարտը: 2017թ. հոկտեմբերին ՀՀՄՄԽ-ն հրապարակել է «Վաղաժամկետ մարման պայման բացասական հատուցմամբ» (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ): Փոփոխությունները գործում են 2019թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող է կիրառվել ժամանակից շուտ:

Կազմակերպությունը կսկսի 2014թ. հուլիսին հրապարակված ՖՀՄՍ 9-ի կիրառումը 2018թ. հունվարի 1-ից և այդ նույն ամսաթվից ժամկետից շուտ կկիրառի ՖՀՄՍ 9-ի փոփոխությունները: Առ այսօր կատարած գնահատումներից ելնելով՝ ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում արժեզրկման պահանջների հետ կապված 2018թ. հունվարի 1-ի դրությամբ Կազմակերպության սեփական կապիտալի տարեսկզբի մնացորդի գծով ընդհանուր ճշգրտումը (առանց հարկերի) մոտավորապես կազմում է 122,642 հազար դրամ: Դեկավարությունն այս ազդեցությունն էական չի համարում հետագա գնահատումը բացահայտելու համար:

(բ) ՖՀՄՍ 16 «Վարձակալություն»

ՖՀՄՍ 16-ը փոխարինում է ՀՀՄՍ 17 «Վարձակալություն», ՖՀՄՄԿ մեկնաբանություն 4 «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում», ՄՄԿ մեկնաբանություն 15 «Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ» և ՄՄԿ մեկնաբանություն 27 «Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը» սահմանված վարձակալության հաշվառման ուղեցույցները:

ՖՀՄՍ 16-ը կգործի 2019թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող է կիրառվել ժամանակից շուտ՝ նաև ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ» ստադարտը ՖՀՄՍ 16-ի կիրառման ամսաթվից կամ դրանից առաջ կիրառելու պայմանով:

ՖՀՄՍ 16-ը սահմանում է մեկ՝ հաշվեկշռային հաշվառման մոդել վարձակալության համար: Այս մոդելի համաձայն՝ վարձակալը պետք է ճանաչի օգտագործման իրավունք հանդիսացող ակտիվը, որն իրենից ներկայացնում է ելակետային ակտիվն օգտագործելու իրավունք, և վարձակալության գծով պարտավորությունը, որն իրենից ներկայացնում է վարձավճարների վճարման պարտականություն: Նախատեսված են կամայական

բացառություններ կարճաժամկետ վարձակալության և ցածր արժեք ունեցող միավորների վարձակալության համար: Վարձատուի համար հաշվառման ներկայիս մոտեցումը չի փոփոխվում, նա շարունակում է դասակարգել վարձակալությունը ֆինանսական և գործառնական դասերի:

Կազմակերպությունն ավարտել է ՖՀՄՍ 16-ի կիրառման հնարավոր ազդեցության նախնական գնահատումն իր ֆինանսական հաշվետվությունների վրա, սակայն դեռ չի ավարտել մանրամասն գնահատումը: Ֆինանսական հաշվետվությունների վրա ՖՀՄՍ 16-ի փաստացի ազդեցությունը սկզբնական կիրառման ժամանակաշրջանում կախված կլինի ապագա տնտեսական պայմաններից, այդ թվում՝ Կազմակերպության փոխառության դրույքից 2019թ. հունվարի 1-ի դրությամբ, վարձակալության պորտֆելի կառուցվածքից այդ ամսաթվի դրությամբ և Կազմակերպության ամենավերջին գնահատումից, եւ արդյոք այն կօգտվի վարձակալությունը երկարաձգելու հնարավորություններից, ինչպես նաև ստանդարտով նախատեսված գործանական բնույթի որ պարզեցումներից և ճանաչման հետ կապված ազատումներից Կազմակերպությունը կորոշի օգտվել:

Ներկա պահին հայտնաբերված առավել էական ազդեցությունը կայանում է նրանում, որ Կազմակերպությունը կճանաչի նոր ակտիվներ և պարտավորություններ գրասենյակի շենքերի գործառնական վարձակալության գծով: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության ապագա նվազագույն վարձավճարները չեղյալ չհայտարարվող վարձակալության շրջանակներում կազմում էին 221,006 հազար դրամ՝ չզեղչված հիմունքով:

Բացի այդ, կփոխվի վարձակալության այդ պայմանագրերի գծով ճանաչվող ծախսերի բնույթը, քանի որ ՖՀՄՍ 16-ի համաձայն, գծային հիմունքով ճանաչվող գործառնական վարձակալության ծախսերի փոխարեն Կազմակերպությունը պետք է արտացոլի ակտիվից օգտվելու իրավունքի մաշվածության գծով ծախսերը և վարձակալության գծով պարտավորությունների տոկոսային ծախսերը: Կազմակերպության ֆինանսական վարձակալության պայմանագրերի համար էական ազդեցություն չի ակնկալվում:

i. Անցումը նոր ստանդարտին

Որպես վարձակալ Կազմակերպությունը կարող է՝

- կիրառել ստանդարտը հետընթաց, կամ
- կիրառել ձևափոխված հետընթաց մոտեցում՝ գործնական բնույթի ոչ պարտադիր պարզեցումներով:

Վարձակալը պետք է կիրառի ընտրված մոտեցումը հետևողականորեն իր բոլոր վարձակալության պայմանագրերի համար:

Կազմակերպությունը պլանավորում է ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառումը 2019թ. հունվարի 1-ին՝ կիրառելով ձևափոխված հետընթաց մոտեցումը: Հետևաբար, ՖՀՄՍ 16-ի կիրառման կումուլյատիվ ազդեցությունը կճանաչվի որպես սեփական կապիտալի տարեսկզբի մնացորդի ճշգրտում 2019թ. հունվարի 1-ին՝ առանց համադրելի տվյալների վերահաշվարկի:

Նախկինում ՖՀՄՍ 17-ի համաձայն որպես գործառնական վարձակալություն դասված պայմանագրերի նկատմամբ ձևափոխված հետընթաց մոտեցումը կիրառելիս՝ վարձակալը կարող էր ընտրել, արդյոք անհրաժեշտ է անցման ժամանակ կիրառել գործնական բնույթի ոչ պարտադիր պարզեցումները: Կազմակերպությունը ներկայումս գնահատում է այս

գործնական բնույթի ոչ պարտադիր պարզեցումների կիրառման հնարավոր ազդեցությունը:

Կազմակերպությունից չի պահանջվում կատարել ճշգրտումներ վարձակալության այն պայմանագրերի գծով, որոնց շրջանակներում այն հանդես է գալիս որպես վարձատու, բացառությամբ այն դեպքերի, երբ այն հանդես է գալիս որպես միջանկյալ վարձատու ենթավարձակալության շրջանակներում:

(գ) Այլ ստանդարտներ

Ստորև ներկայացված փոփոխված ստանդարտները և դրանց մեկնաբանություններն ըստ ակնկալիքների էական ազդեցություն չեն ունենա Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *ՖՀՄՄ-ների տարեկան կատարելագործումներ, 2014-2016թթ. ժամանակաշրջան – ՖՀՄՄ 1-ի և ՀՀՄՄ 28-ի փոփոխություններ*
- *Բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքների դասակարգում և չափում (ՖՀՄՄ 2-ի փոփոխություններ)*
- *Ներդրումային գույքի փոխանցում (ՀՀՄՄ 40-ի փոփոխություններ)*
- *Ակտիվների վաճառք կամ ներդրում ներդրողի և նրա կապակցված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության միջև գործարքում (ՖՀՄՄ 10-ի և ՀՀՄՄ 28-ի փոփոխություններ)*
- *ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 22 «Արտարժույթով գործարքներ և կանխավճարային հատուցումներ»*
- *ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 23 «Շահութահարկի հաշվառման հետ կապված անորոշություն»*

4 Չուտ տոկոսային եկամուտ

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտ		
Հաճախողներին տրված վարկեր	2,492,581	2,615,606
Ֆինանսական կազմակերպությունների պարտավորություններ	100,261	122,908
Եկամուտ ֆակտորինգից	1,721	-
	2,594,563	2,738,514
Տոկոսային ծախս		
Վարկեր և փոխառություններ	530,330	680,686

5 Այլ եկամուտ

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Եկամուտ տուգանքներից	241,275	351,075
Եկամուտ այլ ծառայություններից	15,411	6,025
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	1,685	1,750
Այլ եկամուտ	1,447	1,526
	259,818	360,376

6 Արժեզրկումից կորուստներ

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Հաճախորդներին տրված վարկեր	433,589	933,802
Այլ ակտիվներ	4,946	19,566
	438,535	953,368

7 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Գործառնական վարձակալության գծով ծախս	107,183	107,062
Մաշվածություն և ամորտիզացիա	82,831	100,009
Վերանորոգման և սպասարկման ծախսեր	41,084	48,026
Անվտանգության ծառայություն	38,115	46,307
Կոմունալ և գրասենյակային ծախսեր	34,822	36,241
Գովազդի և շուկայավարման ծախսեր	30,867	22,480
Տրանսպորտային ծախսեր	21,525	33,183
Հարկեր, բացառությամբ շահութահարկի	19,435	31,454
Կապի և տեղեկատվական ծառայություններ	16,023	18,142
Մասնագիտական ծառայություններ	13,200	20,541
Այլ	29,407	27,483
	434,492	490,928

8 Շահութահարկի գծով ծախս

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Ընթացիկ տարվա հարկի գծով ծախս	71,089	39,532
Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների շարժ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման արդյունքում	40,564	1,502
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	111,563	41,034

2017թ-ին ընթացիկ և հետաձգված հարկերի գծով կիրառելի հարկային դրույքը կազմում է 20% (2016թ-ին՝ 20%):

Արդյունավետ հարկային դրույքի համադրում դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2017թ. հազ. դրամ	%	2016թ. հազ. դրամ	%
Շահույթ նախքան հարկումը	473,702		82,185	
Շահութահարկ՝ կիրառելի հարկային դրույքով	94,740	20	16,437	20
Չուտ չնվազեցվող ծախսեր	16,823	4	11,920	15
Նախորդ տարիներում պակաս ներկայացված շահութահարկ	-	-	12,677	15
	111,563	24	41,034	50

(ա) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են գուտ հետաձգված հարկային ակտիվներ 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ստորև ներկայացված է ժամանակավոր տարբերությունների շարժը 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում:

2017թ. հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2017թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2017թ.
Ֆինանսական կազմակերպությունների պարտավորություններ	(3,785)	884	(2,901)
Հաճախորդներին տրված վարկեր	73,568	(49,161)	24,407
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(15,766)	4,399	(11,367)
Այլ ակտիվներ	(821)	453	(368)
Վարկեր և փոխառություններ	(2,528)	461	(2,067)
Այլ պարտավորություններ	8,757	2,400	11,157
	59,425	(40,564)	18,861

2017թ. հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2016թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016թ.
Ֆինանսական կազմակերպությունների պարտավորություններ	(5,744)	1,959	(3,785)
Հաճախորդներին տրված վարկեր	76,528	(2,960)	73,568
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(17,521)	1,755	(15,766)
Այլ ակտիվներ	(917)	96	(821)
Վարկեր և փոխառություններ	-	(2,528)	(2,528)
Այլ պարտավորություններ	8,581	176	8,757
	60,927	(1,502)	59,425

9 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Կանխիկը դրամարկրում	35,580	12,260
Ընթացիկ հաշիվներ 10 խոշոր հայկական բանկերում	85,174	148,695
Ընթացիկ հաշիվներ այլ հայկական բանկերում	17,138	30,774
Ժամկետային ավանդներ 10 խոշոր հայկական բանկերում	-	633,630
Ժամկետային ավանդներ այլ հայկական բանկերում	798,883	901,700
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	936,775	1,727,059

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունն ունի մեկ բանկում տեղաբաշխված միջոցներ (2016թ-ին՝ մեկ բանկում), որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի մնացորդի 10%-ը: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 799,749 հազար դրամ (2016թ-ին՝ 902,836 հազար դրամ):

10 Ֆինանսական կազմակերպությունների պարտավորություններ

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Ժամկետային ավանդներ 10 խոշոր հայկական բանկերում	301,332	357,089
Ժամկետային ավանդներ այլ հայկական բանկերում	350,158	-
Այլ մնացորդներ	-	1,376
Ընդամենը ֆինանսական կազմակերպությունների պարտավորություններ	651,490	358,465

Ավանդներն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

11 Հաճախորդներին տրված վարկեր

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Գյուղատնտեսական վարկեր	5,598,402	6,316,325
Սպառողական վարկեր	3,297,334	2,011,926
Բնակարանային պայմանների բարելավման վարկեր	1,868,154	1,906,340
Բիզնես վարկեր	1,479,941	1,544,223
Հիփոթեքային վարկեր	1,288,548	963,030
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	13,532,379	12,741,844
Արժեզրկման գծով պահուստ	(978,750)	(996,675)
Հաճախորդներին տրված զուտ վարկեր	12,553,629	11,745,169

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված վարկերի դասերի 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

	հազ. դրամ
Մնացորդը տարեսկզբի դրությամբ	996,675
Զուտ ծախս	433,589
Դուրսգրումներ	(451,514)
Մնացորդը տարեվերջի դրությամբ	978,750

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված վարկերի դասերի 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

	հազ. դրամ
Մնացորդը տարեսկզբի դրությամբ	1,005,008
Զուտ ծախս	934,129
Դուրսգրումներ	(942,462)
Մնացորդը տարեվերջի դրությամբ	996,675

(ա) Հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկման սպահուստ հազ. դրամ	Զուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկման սպահուստ %
Գյուղատնտեսական վարկեր				
- ոչ ժամկետանց	4,889,610	44,006	4,845,604	0.9
- մինչև 30 օր ժամկետանց	39,355	12,260	27,095	31.2
- 31-91 օր ժամկետանց	75,879	42,319	33,560	55.8
- 91-180 օր ժամկետանց	126,394	75,837	50,557	60.0
- ավելի քան 180 օր ժամկետանց	467,164	459,307	7,857	98.3
Ընդամենը գյուղատնտեսական վարկեր	5,598,402	633,729	4,964,673	11.3
Սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	3,185,994	28,674	3,157,320	0.9
- մինչև 30 օր ժամկետանց	30,814	7,395	23,419	24.0
- 31-90 օր ժամկետանց	24,469	18,614	5,855	76.1
- 91-180 օր ժամկետանց	24,884	22,744	2,140	91.4
- ավելի քան 180 օր ժամկետանց	31,173	29,197	1,976	93.7
Ընդամենը սպառողական վարկեր	3,297,334	106,624	3,190,710	3.2
Բնակարանային պայմանների բարելավման վարկեր				
- ոչ ժամկետանց	1,764,430	15,873	1,748,557	0.9
- մինչև 30 օր ժամկետանց	10,024	2,280	7,744	22.7
- 31-90 օր ժամկետանց	12,125	6,287	5,838	51.9
- 91-180 օր ժամկետանց	17,360	11,458	5,902	66.0
- ավելի քան 180 օր ժամկետանց	64,215	63,206	1,009	98.4
Ընդամենը բնակարանային պայմանների բարելավման վարկեր	1,868,154	99,104	1,769,050	5.3
Բիզնես վարկեր				
- ոչ ժամկետանց	1,371,327	12,342	1,358,985	0.9
- մինչև 30 օր ժամկետանց	7,653	2,637	5,016	34.5
- 31-90 օր ժամկետանց	5,254	3,218	2,036	61.2
- 91-180 օր ժամկետանց	27,202	19,204	7,998	70.6
- ավելի քան 180 օր ժամկետանց	68,505	67,797	708	99.0
Ընդամենը բիզնես վարկեր	1,479,941	105,198	1,374,743	7.1
Հիփոթեքային վարկեր				
- ոչ ժամկետանց	1,249,425	5,622	1,243,803	0.5
- մինչև 30 օր ժամկետանց	4,809	231	4,578	4.8
- 31-90 օր ժամկետանց	6,996	924	6,072	13.2
- ավելի քան 180 օր ժամկետանց	27,318	27,318	-	100
Ընդամենը հիփոթեքային վարկեր	1,288,548	34,095	1,254,453	2.6
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	13,532,379	978,750	12,553,629	7.2

«Աամուրջ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ
 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
 ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկման պահուստ հազ. դրամ	Չուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %
Գյուղատնտեսական վարկեր				
- ոչ ժամկետանց	5,431,840	48,887	5,382,953	0.9
- մինչև 30 օր ժամկետանց	81,843	25,494	56,349	31.2
- 31-91 օր ժամկետանց	173,028	96,804	76,224	55.9
- 91-180 օր ժամկետանց	271,787	163,072	108,715	60.0
- ավելի քան 180 օր ժամկետանց	357,827	339,120	18,707	94.8
Ընդամենը գյուղատնտեսական վարկեր	6,316,325	673,377	5,642,948	10.7
Սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	1,969,172	17,723	1,951,449	0.9
- մինչև 30 օր ժամկետանց	6,119	1,469	4,650	24.0
- 31-90 օր ժամկետանց	5,759	4,401	1,358	76.4
- 91-180 օր ժամկետանց	8,158	7,137	1,021	87.5
- ավելի քան 180 օր ժամկետանց	22,718	21,135	1,583	93.0
Ընդամենը սպառողական վարկեր	2,011,926	51,865	1,960,061	2.6
Բնակարանային պայմանների բարելավման վարկեր				
- ոչ ժամկետանց	1,745,467	15,709	1,729,758	0.9
- մինչև 30 օր ժամկետանց	14,315	3,257	11,058	22.8
- 31-90 օր ժամկետանց	25,339	13,667	11,672	53.9
- 91-180 օր ժամկետանց	46,025	30,736	15,289	66.8
- ավելի քան 180 օր ժամկետանց	75,194	71,875	3,319	95.6
Ընդամենը բնակարանային պայմանների բարելավման վարկեր	1,906,340	135,244	1,771,096	7.1
Բիզնես վարկեր				
- ոչ ժամկետանց	1,392,717	12,534	1,380,183	0.9
- մինչև 30 օր ժամկետանց	29,660	10,218	19,442	34.5
- 31-90 օր ժամկետանց	14,534	8,927	5,607	61.4
- 91-180 օր ժամկետանց	28,644	20,223	8,421	70.6
- ավելի քան 180 օր ժամկետանց	78,668	75,348	3,320	95.8
Ընդամենը բիզնես վարկեր	1,544,223	127,250	1,416,973	8.2
Հիփոթեքային վարկեր				
- ոչ ժամկետանց	937,311	4,218	933,093	0.5
- 91-180 օր ժամկետանց	17,302	3,166	14,136	18.3
- ավելի քան 180 օր ժամկետանց	8,417	1,555	6,862	18.5
Ընդամենը հիփոթեքային վարկեր	963,030	8,939	954,091	0.9
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	12,741,844	996,675	11,745,169	7.8

(բ) Վարկերի արժեզրկման գնահատման համար կիրառվող հիմնական ենթադրություններ և դատողություններ

Կազմակերպությունը չունի առանձին հիմունքով էական հանդիսացող վարկեր, այդ իսկ պատճառով, դեկավարությունը հաճախորդներին տրված վարկերի արժեզրկումը որոշում է արժեզրկման հավաքական հիմունքով գնահատման հիման վրա:

Հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստը որոշելիս՝ Կազմակերպությունն առաջնորդվում է այն հիմնական ենթադրությամբ, որ վնասի շարժի դրույքները կայուն են և կարող են գնահատվել վերջին 24 ամիսների ընթացքում կրած վնասի շարժի մոդելի հիման վրա:

Այս գնահատումների փոփոխություններն ազդեցություն կունենան վարկերի արժեզրկման գծով պահուստի վրա: Օրինակ, եթե գնահատված դրամական միջոցների հոսքերի գուտներ կարժեքը փոփոխվի մեկ տոկոսով, ապա հաճախորդներին տրված վարկերի արժեզրկման գծով պահուստի գումարը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կնվազի/կավելանա 125,536 հազար դրամով (2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կնվազի/կավելանա 117,452 հազար դրամով):

(գ) Գրավի և այլ ապահովության վերլուծություն

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի համար ապահովություն ծառայող գրավի և ապահովության այլ միջոցների վերաբերյալ (առանց արժեզրկման)՝ ըստ գրավի տեսակների:

31 դեկտեմբերի 2017թ.

հազ. դրամ	Հաճախորդներին տրված վարկեր, հաշվեկշռային արժեք	Գրավի իրական արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատված գրավի համար	Գրավի իրական արժեքը վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ գնահատված գրավի համար
Ոչ ժամկետանց վարկեր			
Անշարժ գույք	2,461,868	-	2,461,868
Փոխադրամիջոցներ	37,333	-	37,333
Ոսկերչական իրեր	133,065	-	133,065
Այլ գրավ	9,876	-	9,876
Առանց գրավի	9,712,127	-	-
Ընդամենը ոչ ժամկետանց վարկեր	12,354,269	-	2,642,142
Ժամկետանց վարկեր			
Անշարժ գույք	27,760	-	27,760
Ոսկերչական իրեր	1,069	-	1,069
Այլ գրավ	170,531	-	-
Ընդամենը ժամկետանց վարկեր	199,360	-	28,829
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	12,553,629	-	2,670,971

«Կամուրջ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ
 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
 ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

31 դեկտեմբերի 2016թ.

հազ. դրամ	Հաճախորդներին տրված վարկեր, հաշվեկշռային արժեք	Գրավի իրական արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատված գրավի համար	Գրավի իրական արժեքը վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ գնահատված գրավի համար
Ոչ ժամկետանց վարկեր			
Անշարժ գույք	1,663,860	-	1,663,860
Փոխադրամիջոցներ	24,485	-	24,485
Այլ գրավ	11,804	-	11,804
Առանց գրավի	9,677,287	-	-
Ընդամենը ոչ ժամկետանց վարկեր	11,377,436	-	1,700,149
Ժամկետանց վարկեր			
Անշարժ գույք	35,356	-	35,356
Առանց գրավի	332,377	-	-
Ընդամենը ժամկետանց վարկեր	367,733	-	35,356
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	11,745,169	-	1,735,505

Վերը ներկայացված աղյուսակները չեն ներառում գրավի արժեքի՝ վարկի գումարին գերազանցող մասը:

Կազմակերպությունն ունի վարկեր, որոնց համար գրավի իրական արժեքը գնահատվել է վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ և չի վերանայվել՝ հետագա փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Մի քանի տեսակի գրավներով ապահովված վարկերի համար բացահայտվում է այն գրավը, որն առավել համապատասխանում է արժեզրկման գնահատմանը: Անհատներից ստացված հավաստումները չեն դիտարկվում արժեզրկման գնահատման նպատակների համար: Այդ իսկ պատճառով, նման վարկերը և մասնակիորեն ապահովված վարկերի չապահովված մասերը ներկայացվում են որպես առանց գրավի և ապահովության այլ միջոցների վարկեր:

Գյուղատնտեսական, սպառողական, բնակարանային պայմանների բարելավման և բիզնես վարկերի մեծամասնությունը գրավով ապահովված չէ:

Հիփոթեքային վարկերի դիմաց գրավադրվում է վարկի առարկա հանդիսացող անշարժ գույքը: Կազմակերպության քաղաքականության համաձայն՝ հիփոթեքային վարկերը տրամադրվում են առավելագույնը 70% վարկ/արժեք հարաբերակցությամբ վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ:

(դ) Գրավադրված ակտիվներ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 155,412 հազար դրամ ընդհանուր գումարով հաճախորդներին տրված վարկերը (2016թ-ին՝ 87,526 հազար դրամ) ծառայում են որպես գրավ վարկերի և փոխառությունների համար (ծանոթագրություն 13):

(ե) Վարկային պորտֆելի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերը տրամադրվել են հիմնականում Հայաստանի Հանրապետությունում գտնվող հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են տնտեսության հետևյալ ճյուղերում.

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Սպառողական ոլորտ	6,454,035	4,881,296
Գյուղատնտեսություն	5,598,402	6,316,325
Առևտուր	978,300	1,062,964
Արդյունաբերություն	277,803	245,530
Այլ	223,839	235,729
Հաճախորդներին տրված վարկեր	13,532,379	12,741,844
Արժեզրկման գծով պահուստ	(978,750)	(996,675)
	12,553,629	11,745,169

(զ) Վարկային ռիսկին ենթարկվածություն

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի այնպիսի վարկառուներ կամ կապակցված վարկառուների խմբեր որոնց տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի մնացորդի 10%-ը (2016թ-ին նման վարկառուներ չկան):

(է) Վարկերի մարման ժամկետներ

Վարկային պորտֆելի մարման ժամկետների վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 14-ի (դ) կետում, որտեղ արտացոլված է հաշվետու ամսաթվից մինչև վարկերի պայմանագրով նախատեսված մարման ժամկետն ընկած ժամանակահատվածը:

12 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	Հոդ և շենքեր	Վարձակալված հիմնական միջոցների բարելավումներ	Համակար- գիչներ և կապի սարքավորումն.	Փոխադրա- միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք							
Մնացորդը առ 1 հունվարի 2017թ.	-	4,956	210,787	94,090	20,877	167,598	498,308
Ավելացումներ	10,766	10,738	20,576	-	4,263	21,869	68,212
Օտարումներ	-	-	(1,341)	-	-	(2,865)	(4,206)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2017թ.	10,766	15,694	230,022	94,090	25,140	186,602	562,314
Մաշվածություն և ամորտիզացիա							
Մնացորդը առ 1 հունվարի 2017թ.	-	(1,283)	(148,822)	(67,184)	(14,628)	(97,460)	(329,377)
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	-	(892)	(39,338)	(12,893)	(1,225)	(28,483)	(82,831)
Օտարումներ	-	-	1,341	-	-	2,767	4,108
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2017թ.	-	(2,175)	(186,819)	(80,077)	(15,853)	(123,176)	(408,100)
Հաշվեկշռային արժեք							
Առ 31 դեկտեմբերի 2017թ.	10,766	13,519	43,203	14,013	9,287	63,426	154,214
հազ. դրամ	Հոդ և շենքեր	Վարձակալված հիմնական միջոցների բարելավումներ	Համակար- գիչներ և կապի սարքավորումն.	Փոխադրա- միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք							
Մնացորդը առ 1 հունվարի 2016թ.	-	4,956	178,405	94,090	26,288	160,177	463,916
Ավելացումներ	-	-	32,382	-	89	7,797	40,268
Օտարումներ	-	-	-	-	(5,500)	(376)	(5,876)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016թ.	-	4,956	210,787	94,090	20,877	167,598	498,308
Մաշվածություն և ամորտիզացիա							
Մնացորդը առ 1 հունվարի 2016թ.	-	(774)	(98,393)	(48,365)	(17,431)	(68,629)	(233,592)
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	-	(509)	(50,429)	(18,819)	(1,045)	(29,207)	(100,009)
Օտարումներ	-	-	-	-	3,848	376	4,224
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016թ.	-	(1,283)	(148,822)	(67,184)	(14,628)	(97,460)	(329,377)
Հաշվեկշռային արժեք							
Առ 31 դեկտեմբերի 2016թ.	-	3,673	61,965	26,906	6,249	70,138	168,931
Առ 1 հունվարի 2016թ.	-	4,182	80,012	45,725	8,857	91,548	230,324

13 Վարկեր և փոխառություններ

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Գրավով չապահովված վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	4,027,448	5,451,674
Գրավով չապահովված վարկեր վերաֆինանսավորող վարկային կազմակերպություններից	1,450,381	1,055,616
Գրավով ապահովված փոխառություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններից	1,373,908	848,244
Գրավով չապահովված փոխառություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններից	1,006,826	759,833
Գրավով չապահովված վարկեր ՀՀ ԿԲ-ից	34,284	44,339
	7,892,847	8,159,706

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 155,412 հազար դրամ (2016թ-ին՝ 87,526 հազար դրամ) գումարով հաճախորդներին տրված վարկերը ծառայում են որպես գրավ պետական ոչ առևտրային կազմակերպություններից ստացված գրավով ապահովված փոխառությունների համար (ծանոթագրություն 11):

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունն ունի հինգ վարկատուներից ստացված վարկեր և փոխառություններ (2016թ-ին՝ յոթ վարկառու), որոնց միջոցների մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի մնացորդի 10%-ը: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդները կազմում են 6,245,355 հազար դրամ (2016թ-ին՝ 5,739,415 հազար դրամ):

2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը խախտել է իր վարկառուներից մեկի հետ կնքված վարկային պայմանագրով սահմանված որոշ առավելագույն սահմանաչափեր: 856,345 հազար դրամ գումարով վարկերը դասակարգված են որպես «ցպահանջ» և «մինչև մեկ ամիս մարման ժամկետով» տոկոսադրույքների վերանայման ժամկետների, իրացվելիության և մարման ժամկետների վերլուծության աղյուսակներում ծանոթագրություն 14-ում: Հաշվետու ամսաթվից հետո Կազմակերպության ղեկավարությունը գտնվում է վարկառուի հետ վարկերի ցպահանջ մարումը պահանջելու իրավունքից հրաժարվելու հարցի համաձայնեցման գործընթացում:

(ա) Պարտավորությունների փոփոխությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքերի համադրում

հազ. դրամ	Վարկեր և փոխառություններ
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	8,159,706
Ֆինանսավորման գործունեությունից ստացվող դրամական միջոցների հոսքերի հետ կապված փոփոխություններ	
Մուտքեր վարկերից և փոխառություններից	4,196,525
Վարկերի և փոխառությունների մարում	(4,417,603)
Ֆինանսավորման գործունեությունից ստացվող դրամական միջոցների հոսքերի հետ կապված ընդամենը փոփոխություններ	(221,078)
Փոփոխությունների ազդեցությունը արտարժույթի փոխարժեքի վրա	822
Այլ փոփոխություններ	
Տոկոսային ծախսեր	530,330
Վճարված տոկոսներ	(576,933)
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,892,847

14 Ռիսկերի կառավարում

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարումն էական գործոն է վարկավորման ոլորտի համար և Կազմակերպության գործառնությունների կարևոր տարր է: Շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Կազմակերպությունը:

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Կազմակերպությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

Ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար՝ սահմանված համապատասխան սահմանաչափերում Կազմակերպության գործունեությունն ապահովելու նպատակով: Ռիսկերի կառավարման բաժնի ղեկավարը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման և համապատասխանության ապահովման համար, նա նաև վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման համար ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառումը: Ղեկավարությունն ուղղակիորեն հաշվետու է Տնօրենների խորհրդին:

Ռիսկի թե՛ արտաքին, թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են կազմակերպչական կառուցվածքի շրջանակներում: Կազմակերպությունը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների նպատակահարմարության աստիճանի որոշմանը:

(բ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի, արտարժույթի և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների ու արտարժույթի փոխարժեքների տատանումների ազդեցությանը: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն են, որոնք թույլ կտան պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Կազմակերպությունը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների, տոկոսադրույքների մարման ժամկետների և արտարժույթի դիրքերի հետ կապված, որոնք կանոնավոր կերպով վերահսկվում, ուսումնասիրվում և հաստատվում են ղեկավարության կողմից:

(i) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Կազմակերպությունը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծություն

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների վերանայման ժամկետների մոնիտորինգի միջոցով: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծությունը հիմնական ֆինանսական գործիքների համար:

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռ. արժեք
31 դեկտեմբերի 2017թ.							
ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	818,830	-	-	-	-	117,945	936,775
Ֆինանսական կազմակերպությունների պարտավորություններ	651,490	-	-	-	-	-	651,490
Հաճախորդներին տրված վարկեր	1,556,886	1,723,350	3,713,182	4,941,775	618,436	-	12,553,629
	3,027,206	1,723,350	3,713,182	4,941,775	618,436	117,945	14,141,894
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Վարկեր և փոխառություններ	1,016,204	445,534	1,447,414	4,437,333	546,362	-	7,892,847
	2,011,002	1,277,816	2,265,768	504,442	72,074	117,945	6,249,047
հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռ. արժեք
31 դեկտեմբերի 2016թ.							
ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,535,330	-	-	-	-	191,729	1,727,059
Ֆինանսական կազմակերպությունների պարտավորություններ	-	357,089	-	-	-	1,376	358,465
Հաճախորդներին տրված վարկեր	1,557,985	1,739,409	4,041,994	3,932,926	472,855	-	11,745,169
	3,093,315	2,096,498	4,041,994	3,932,926	472,855	193,105	13,830,693
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Վարկեր և փոխառություններ	684,138	1,055,523	2,433,791	3,565,592	420,662	-	8,159,706
	2,409,177	1,040,975	1,608,203	367,334	52,193	193,105	5,670,987

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2017թ.			2016թ.		
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ
Տոկոսակիր ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5.9	-	-	7.0	1.0	1.0
Ֆինանսական կազմակերպությունների պարտավորություններ	7.1	-	-	8.0	-	-
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	-	-	-	15.0	8.5	-
Հաճախորդներին տրված վարկեր	17.0	15.1	-	18.2	14.8	-
Տոկոսակիր պարտավորություններ						
Վարկեր և փոխառություններ	7.4	6.9	-	7.9	7.3	-

Տոկոսադրույքի զգայունության վերլուծություն

Տոկոսադրույքի վերանայման ժամկետների վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայունության մոնիտորինգով: Ստորև ներկայացվում է տոկոսադրույքի փոփոխության (վերազնորոշման ռիսկ) նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայունության վերլուծությունը, որն իրականացվել է 100 բազիսային կետով (բկ) եկամտաբերության կորերի գույքահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2017թ. ու 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի հիման վրա:

հազ. դրամ	31 դեկտեմբերի 2017թ.	31 դեկտեմբերի 2016թ.
	Մեփական կապիտալ և շահույթ	Մեփական կապիտալ և շահույթ
100 բկ գույքահեռ նվազում	21,657	38,430
100 բկ գույքահեռ աճ	(21,657)	(38,430)

(ii) Արտարժույթի ռիսկ

Կազմակերպությունն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արտարժույթի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	<u>ՀՀ դրամ հազ. դրամ</u>	<u>ԱՄՆ դոլար հազ. դրամ</u>	<u>Այլ արտարժույթ հազ. դրամ</u>
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	904,680	29,588	2,507
Ֆինանսական կազմակերպությունների պարտավորություններ	651,490	-	-
Հաճախորդներին տրված վարկեր	8,102,529	4,451,100	-
Ընդամենը ակտիվներ	9,658,699	4,480,688	2,507
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Վարկեր և փոխառություններ	3,736,287	4,156,560	-
Չուտ դիրքը	5,922,412	324,128	2,507

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	<u>ՀՀ դրամ հազ. դրամ</u>	<u>ԱՄՆ դոլար հազ. դրամ</u>	<u>Այլ արտարժույթ հազ. դրամ</u>
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,631,557	91,940	3,562
Ֆինանսական կազմակերպությունների պարտավորություններ	358,465	-	-
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	22,053	21,186	-
Հաճախորդներին տրված վարկեր	6,855,880	4,889,289	-
Ընդամենը ակտիվներ	8,867,955	5,002,415	3,562
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Վարկեր և փոխառություններ	2,664,086	5,495,620	-
Չուտ դիրքը	6,203,869	(493,205)	3,562

2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունը հիմնված է արտարժույթների փոխարժեքների տատանումների վրա, որոնք Կազմակերպությունը դիտարկում է որպես ողջամտորեն հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

	<u>2017թ. հազ. դրամ</u>	<u>2016թ. հազ. դրամ</u>
ԱՄՆ դոլարի փոխարժեքի 10% արժևորում ՀՀ դրամի նկատմամբ	32,413	(49,321)

2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևորումը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն՝ սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ պայմանով, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները: Կազմակերպությունը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր պարտքային ռիսկը կառավարելու համար, ներառյալ պորտֆելի կենտրոնացվածության սահմանափակմանը վերաբերող ցուցումները: Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրենների խորհրդի կողմից:

Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների ուսումնասիրման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- պայմանագրային կողմերի վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկերի փաստաթղթավորման պահանջները,
- վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական վերահսկման ընթացակարգերը:

Պարտքային ռիսկն այն հիմնական ռիսկն է, որին ենթարկվում է Կազմակերպության գործունեությունը, այդ իսկ պատճառով, ղեկավարությունն ըստ պատշաճի կառավարում է Կազմակերպության ենթարկվածությունը պարտքային ռիսկին: Պարտքային ռիսկին ենթարկվածությունը հիմնականում առաջանում է վարկերի և փոխատվությունների հետ կապված: Պարտքային ռիսկը կառավարվում է Կազմակերպության վարակավորման բաժնի մենեջերների և Մոնիտորինգի բաժնի կողմից, և համապատասխան հաշվետվությունները կանոնավոր կերպով ներկայացվում են ղեկավարությանը:

Պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ պարտքային ռիսկի նվազման վրա:

Ստրուկտուրայից բաղկացած է ֆինանսական ակտիվների գծով պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ:

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	901,195	1,714,799
Ֆինանսական կազմակերպությունների պարտավորություններ	651,490	358,465
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	-	43,239
Հաճախորդներին տրված վարկեր	12,553,629	11,745,169
Ենթարկվածության ընդհանուր առավելագույն չափը	14,106,314	13,861,672

Որպես կանոն գրավ չի պահանջվում ֆինանսական կազմակերպությունների պարտավորությունների համար:

Հաճախորդներին տրված վարկերի գրավի և այդ վարկերի գծով պարտքային ռիսկի կենտրոնացվածության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 11-ում:

2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի պարտապաններ կամ կապակցված պարտապանների խմբեր, որոնց հետ կապված պարտքային ռիսկը գերազանցում է ընդհանուր պարտքային ռիսկի 10%-ը:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Կազմակերպությունը կունենա դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների ամբողջական համապատասխանությունը բնորոշ չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը:

Կազմակերպության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար:

Կազմակերպությունը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է այլ բանկերից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերը և բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և արդյունավետ բավարարելու նպատակով:

«Համուրջ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ
 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
 ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների գծով դրամական միջոցների չգեղչված հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված առավել վաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված արտահոսքի ընդհանուր համախառն գումարն իրենից ներկայացնում է պայմանագրային չգեղչված դրամական միջոցների հոսքերը ֆինանսական պարտավորությունների գծով: Այս ֆինանսական պարտավորությունների գծով ակնկալվող դրամական միջոցների հոսքերը կարող են էականորեն տարբերվել այս վերլուծությունում ներկայացվածներից:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների մարման ժամկետների վերլուծությունը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ	933,376	128,255	450,876	1,543,511	6,179,047	9,235,065	7,892,847

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների մարման ժամկետների վերլուծությունը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ	104,793	588,246	1,084,638	2,563,464	4,911,431	9,252,572	8,159,706

«Կամուրջ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ
 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
 ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունը՝ ըստ մարման ակնկալվող ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամ- կետ	Ժամկե- տանց	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	538,144	398,631	-	-	-	-	-	936,775
Ֆինանսական կազմակերպությունների պարտավորություններ	350,158	301,332	-	-	-	-	-	651,490
Հաճախորդներին տրված վարկեր	436,618	1,041,828	5,436,532	4,941,775	618,436	-	78,440	12,553,629
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	154,214	-	154,214
Ընդամենը ակտիվներ	1,324,920	1,741,791	5,436,532	4,941,775	618,436	154,214	78,440	14,296,108
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Վարկեր և փոխառություններ	889,489	126,715	1,892,948	4,437,333	546,362	-	-	7,892,847
Ջուտ դիրքը	399,851	1,615,076	3,543,584	504,442	72,074	189,794	78,440	6,403,261

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունն ունի 2,000,000 հազար դրամ գումարով չօգտագործված վարկային զիծ (2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նման վարկային զիծ չկար):

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունը՝ ըստ մարման ակնկալվող ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամ- կետ	Ժամկե- տանց	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	844,133	882,926	-	-	-	-	-	1,727,059
Ֆինանսական կազմակերպությունների պարտավորություններ	-	1,376	357,089	-	-	-	-	358,465
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	-	-	-	43,239	-	-	-	43,239
Հաճախորդներին տրված վարկեր	402,440	997,047	5,781,403	3,932,926	472,855	-	158,498	11,745,169
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	168,931	-	168,931
Ընդամենը ակտիվներ	1,246,573	1,881,349	6,138,492	3,976,165	472,855w	168,931	158,498	14,042,863
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Վարկեր և փոխառություններ	104,337	579,801	3,489,314	3,565,592	420,662	-	-	8,159,706
Ջուտ դիրքը	1,142,236	1,301,548	2,649,178	410,573	52,193	168,931	158,498	5,883,157

15 Կապիտալի կառավարում

Կազմակերպության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից: Կազմակերպությունը որպես կապիտալ սահմանում է օրենսդրությամբ վարկային կազմակերպությունների կապիտալի համար սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն՝ վարկային կազմակերպությունները պետք է ապահովեն նվազագույն բաժնետիրական կապիտալ և ընդհանուր կապիտալ 150,000 հազար դրամի չափով: Բացի այդ, ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, Կազմակերպությունը պետք է ապահովի սահմանված նվազագույն մակարդակը գերազանցող կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցություն («կապիտալի համարժեքության ցուցանիշը»): 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս հարաբերակցության սահմանված նվազագույն մեծությունը կազմում է 10% (2016թ-ին՝ 10%): Կազմակերպությունն ապահովել է կապիտալի համարժեքության սահմանված ցուցանիշը 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ստորև ներկայացված է ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի համարժեքության ցուցանիշը դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2017թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
	<u>Աուդիտ չանցած</u>	<u>Աուդիտ չանցած</u>
Բաժնետիրական կապիտալ	5,000,000	5,000,000
Զբաղիված շահույթը՝ ՀՀ ԿԲ-ի հաշվապահական հաշվառման սկզբունքների համաձայն	844,741	785,511
Ընդամենը կապիտալ	5,844,741	5,785,511
Ռիսկով կշռված ակտիվներ	11,431,534	11,638,448
Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցություն (ընդամենը կապիտալի հարաբերակցություն)	51.1%	49.7%

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ կապված վարկային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականները՝ հաշվի առնելով ցանկացած ընդունելի գրավ կամ երաշխիք: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր վնասի առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

Տարվա ընթացքում Կազմակերպության մոտեցումը կապիտալի կառավարման նկատմամբ չի փոփոխվել (աուդիտ չանցած):

16 Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Կազմակերպությունն ամբողջությամբ ապահովագրված չէ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ շենքին և գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝

Կազմակերպությանը պատկանող տարածքում տեղի ունեցած կամ դրա գործունեությունը վերաբերող պատահարների արդյունքում: Քանի դեռ Կազմակերպությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի բացասական ազդեցություն ունենալ գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Կազմակերպությունը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Դեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունները, եթե այդպիսիք լինեն, զգալի բացասական ազդեցություն չեն ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

(գ) Հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են և ենթարկվում են տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Դեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

17 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Գործարքներ Տնօրենների խորհրդի անդամների և առանցքային ղեկավար անձնակազմի հետ

Ստորև ներկայացված է աշխատակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Աշխատակիցների հատուցումներ և հարակից հարկեր	<u>84,886</u>	<u>87,658</u>

Ստորև ներկայացված են 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Տնօրենների խորհրդի և առանցքային ղեկավար անձնակազմի հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները:

	2017թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %	2016թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Տրամադրված վարկեր (համախառն)	56,898	10.3	45,079	12.3
Վարկերի արժեզրկման գծով պահուստ	(316)		(218)	

Փոխառությունները հիմնականում ենթակա են մարման մինչև 2025թ.: Կապակցված կողմերի հետ գործարքներն ապահովված են գրավոր:

Ստորև ներկայացված է Տնօրենների խորհրդի և առանցքային ղեկավար անձնակազմի հետ գործարքների գծով շահույթում կամ վնասում արտացոլված գումարները դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Շահույթ կամ վնաս		
Տոկոսային եկամուտ	5,480	3,928

18 Ֆինանսական գործիքների իրական արժեք

Կազմակերպությունը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների կատարման ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. նույն գործիքների համար ակտիվ շուկայում գնանշվող գները (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր ելակետային տվյալներ դիտարկելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող): Այս դասը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել է հետևյալը՝ գնանշվող գները նմանատիպ գործիքների համար ակտիվ շուկայում, գնանշվող գները նույն կամ նմանատիպ գործիքների համար ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. ոչ դիտարկելի ելակետային տվյալներ: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնք գնահատվում են դիտարկելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալներից ելնելով, իսկ ոչ դիտարկելի ելակետային տվյալներն էական ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշվող գների հիման վրա, որոնց գծով պահանջվում են նշանակալի ոչ դիտարկելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու նպատակով:

2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները, բացառությամբ հաճախորդներին տրված վարկերի, մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին:

12,553,629 հազար դրամ հաշվեկշռային արժեքով հաճախորդներին տրված վարկերը (2016թ-ին՝ 11,745,169 հազար դրամ) ներառված են վարկերի և դեբիտորական պարտքերի դասում՝ 13,166,762 հազար դրամ (2016թ-ին՝ 11,742,461 հազար դրամ) իրական արժեքով: Հաճախորդներին տրված վարկերի իրական արժեքը գնահատելու համար ղեկավարությունն առաջնորդվել է հետևյալ ենթադրությամբ՝

- իրական արժեքը գնահատվել է կիրառելով զեղչված դրամական միջոցների հոսքերը՝ 11-16% (ՀՀ դրամով) և 7-11% (ԱՄՆ դոլարով) զեղչման դրույքներով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր	-	12,569,169	597,593	13,166,762

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր	-	11,742,461	-	11,742,461

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների փոխանցման ժամանակ:

Գնահատման մեթոդների նպատակն է ստանալ այն իրական արժեքը, որն արտացոլում է այն գումարը, որը կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու համար շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում՝ չափման ամսաթվի դրությամբ:

Գնահատման մեթոդները ներառում են զուտ ներկա արժեքի և զեղչված դրամական միջոցների հոսքերի մոդելները: Գնահատման մեթոդներում կիրառվող ենթադրությունները և ելակետային տվյալները ներառում են ռիսկից զերծ և ելակետային տոկոսադրույքները, արտարժույթի փոխարժեքները: Գնահատման մեթոդների նպատակն է ստանալ այն իրական արժեքը, որն արտացոլում է ֆինանսական գործիքի գինը հաշվետու ամսաթվի դրությամբ, որը կորոշվեր շուկայի մասնակիցների կողմից «անկախ կողմերի միջև գործարքում»: